

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
 ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
 Հիմնադրամի հոգաբարձուների
 խորհրդի 03-04-2024 թ. որոշմամբ
 «ԳԱՖԵՍՃԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
 Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
 հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը	«ԳԱՖԵՍՃԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ	
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ- ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ԹԱՄԱՆՅԱՆ Փ. 10	
1.3 Պետական գրանցման համարը	286.160.04563	
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2002-05-06	
1.5 ՀՎՀՀ-ն	02562304	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)10541932	
	+(374)99200788	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	www.cmf.am	
1.8 Էլեկտրոնային փոստը	financecmf@gmail.com	
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Վահագն Մարաբյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	64	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր	Շրջայցերի կազմակերպման նպատակով ստացված միջոցներ	10,000
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր	Կանոնադրական նպատակների իրականացման համար	300,000
	Հուշանվերների ձեռքբերման նպատակով ստացված միջոցներ	86,560
	Համերգային տոմսերի ձեռքբերման նպատակով ստացված միջոցներ	300,000

	Տարածքի վարձակալման համար ստացված միջոցներ	800,000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Կանոնադրական նպատակների իրականացման համար	2,245,000
	Ձեռնարկատիրական գործունեությունից մուտքեր	73,392,458
	Պատճառված վնասի դիմաց ստացված դրամական միջոցներ ստացված միջոցներ	90,000
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	647,408,979	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվություններ/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Հիմնադրամի տարածքների պահպանություն և սպասարկում	539,489,513	
Թանգարանային գործունեություն	100,100,797	
Համերգային գործունեություն	11,015,314	
Կրթական գործունեություն	21,505,152	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	737,072,676	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	672,110,776	

Նշումներ՝

Գաֆեաճեան Թանգարան հիմնադրամը իր կանոնադրական նպատակների շրջանակներում իրականացնում է նաև Թանգարանի խանութի ապրանքների վաճառք, որոնց գծով ծախսված դրամական միջոցները 2023թ ընթացքում կազմել են 59,742,055 ՀՀ դրամ:

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 29 էջերից:
 էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
 ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը



Consulting&Audit

«ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

**«ԳԱՖԷՍՃԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

2023թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄՔ ՀԱՇՎԵՓԱԿՎԱԾ ՏԱՐՎԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



CAFESJIAN
CENTER FOR THE ARTS

**ԵՐԵՎԱՆ
ԱՊՐԻԼ - 2024թ.**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարության հարտարարությունը 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և/ի հաստատման սրտասխանատվության վերաբերյալ.....	3
Անկախ աուդիտորի եզրակացություն.....	4
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն.....	6
Համապատասխան ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն.....	7
Սևփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն.....	8
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն.....	9
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ.....	10

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2023 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՑՎԱԾ ՑԱՐՎԱ ՀԱՄԱԽԱՏԱԽԱՆ ՀՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Ղեկավարությունը պատասխանատու է «Գաֆեսնեան թանգարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և զուտ ակտիվներում փոփոխությունների մասին ճշմարիտ ներկայացնող, Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

- Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝
- ⬇ Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
 - ⬇ Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
 - ⬇ Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն Հիմնադրամի ֆինանսական վիճակի մասին,
 - ⬇ Հիմնադրամի գործունեության անընդհատությունն ապահովելու կարողության գնահատման համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- ⬇ Հիմնադրամում ներքին վերահսկողության արդյունավետ և ողջամիտ համակարգ մշակելու, ներդնելու և պահպանելու համար,
- ⬇ Համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Հիմնադրամի գործառնությունները արտացոլելու և ներկայացնելու և ցանկացած ժամանակ Հիմնադրամի ֆինանսական վիճակը ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու համար, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն ղեկավարությանը հավաստիանալու, որ Հիմնադրամի համախմբված ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին,
- ⬇ ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- ⬇ Հիմնադրամի ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար,
- ⬇ Խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատված են հրապարակման համար 2024թ. ապրիլի 09-ին:

Գործադիր տնօրեն՝ **Գրիգորյան Մարաթյան**
Գլխավոր հաշվապահ՝ **Պրոկորյա Հովհաննիսյան**



09 ապրիլի 2024թ.
Նրևան, Հարստության Հանրապետություն

«ԷՅՎԻՍԻ ԲՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ



ՀՀ, ք. Երևան, Նուբարաշեն, 10 վող, տուն 6

ՏԳՀ, Երևան, Մյասնիկյան պողոտա 5/1

Հեռ: (010) 57 28 46

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ 048, ՏՐՎԱՅ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՑԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏ -02.08.2006թ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱԳՎՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԿ ԱՆԴԱՄ, ԳՐԱՆՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29, ՀԳԳՀ 1 20 0440

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Գաֆլենեան Թանգարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Գաֆլենեան Թանգարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2023թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, և համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի բաղադրականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՄ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար՝ բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-Վարքագիրը) և ՀՀ-ում կիրառելի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող վարքագծի պահանջների, և պահպանել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պահանջները՝ այդ կանոնների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն մենք՝

- հատկորոշում և զնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- զնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման զնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ զնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների վերաբերյալ էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին՝ դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,
- զնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը,

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց հետ աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Գլխավոր տնօրեն՝

Աուդիտոր՝

09 ապրիլի 2024թ.



Մ. Գեորգյան

Ա. Արարյան

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթագրություն	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	2,724,506	2,875,643
Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ	5	3,747,508	3,747,508
Ներդրումային գույք	6	795,100	357,366
Ոչ նյութական ակտիվներ	7	3,805	3,924
Տրված կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով		1,098	-
Հետաձգված հարկային ակտիվներ	8	7,646	7,646
		7,279,663	6,992,087
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	9	171,915	162,251
Տրված կանխավճարներ	10	23,794	2,576
Դեբիտորական պարտքեր հարկերի գծով	11	6	6
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	27,998	19,802
		223,713	184,635
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		7,503,376	7,176,722
ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Մեփական կապիտալ			
Կուտակված վնաս		(6,164,550)	(6,369,497)
		(6,164,550)	(6,369,497)
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ստացված փոխառություններ կապակցված կողմերից	13	7,769,346	7,550,924
Ակտիվներին վերաբերող շնորհներ		5,726,673	5,851,418
		13,496,019	13,402,342
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային կրեդիտորական պարտքեր	14	14,844	14,798
Ստացված կանխավճարներ	14	20	300
Կրեդիտորական պարտքեր հարկերի գծով	15	6,966	6,053
Կրեդիտորական պարտքեր կենսաթոշակային վճարների գծով		1,661	1,242
Ընթացիկ պահուստներ	16	33,167	27,132
Եկամուտներին վերաբերող շնորհներ		113,036	91,673
Այլ ընթացիկ պարտավորություններ	17	2,213	2,679
		171,907	143,877
ԸՆԴԱՄԵՆԸ ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		7,503,376	7,176,722

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. ապրիլի 09-ին:

Գործադիր տնօրեն՝

Գլխավոր հաշվապահ՝



Ճեփազն Մարաբյան

Վիկտորյա Հովհաննիսյան

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանուցանողությունների հետ մեկտեղ (ԸՄ 10-29):

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթագրություն	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	19	47,290	53,596
Վաճառքի ինքնարժեք	20	(20,636)	(23,742)
Համախառն շահույթ		26,654	29,854
Եկամուտներին վերաբերող շնորհներից եկամուտ		4,028	467
Ավտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ		124,744	125,345
Գործառնական այլ եկամուտներ	21	630,655	620,042
Իրացման ծախսեր	22	(49,918)	(51,604)
Վարչական ծախսեր	23	(242,593)	(229,016)
Գործառնական այլ ծախսեր	24	(520,054)	(469,011)
Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս)		(26,484)	26,077
Այլ ոչ գործառնական շահույթ/(վնաս)	25	231,431	1,800,427
Շահույթ/(վնաս) մինչև հարկերը		204,947	1,826,504
Շահութահարկի գծով ծախս		-	-
Շահույթ/(վնաս)		204,947	1,826,504
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	18	204,947	1,826,504

Գործադիր տնօրեն՝

Գլխավոր հաշվապահ՝



Կոնազն Մարարյան

Արմենուհի Հովհաննիսյան

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցելի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ (էջ 10-29):

Սևիակյան կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար ՀՀ դրամ

	Կուտակված շահույթ/(վնաս)	Ընդամենը
01 հունվարի 2022թ. դրությամբ	(8,196,001)	(8,196,001)
Վնաս	1,826,504	1,826,504
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	1,826,504	1,826,504
31 դեկտեմբերի 2022թ. դրությամբ	(6,369,497)	(6,369,497)
Վնաս	204,947	204,947
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	204,947	204,947
31 դեկտեմբերի 2023թ. դրությամբ	(6,164,550)	(6,164,550)

Գործադիր տնօրեն՝

Լահազն Մարարյան

Գլխավոր հաշվապահ՝

Վիկտորյա Հովհաննիսյան



Սևիակյան կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ (էջ 10-29):

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար ՀՀ դրամ

	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ապրանքների վաճառքից և ծառայությունների մատուցումից ստացված դրամական միջոցների մուտքեր	28,926	38,176
Գործակալական ապրանքների վաճառքից դրամական միջոցների մուտքեր	45,896	39,137
Գործառնական այլ գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	<u>655,840</u>	<u>620,142</u>
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների համախառն մուտքեր	730,662	697,455
Պաշարների և ծառայությունների դիմաց մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(259,006)	(228,714)
Գործակալական ապրանքների վաճառքից վճարված դրամական միջոցներ	(27,567)	(21,633)
Վճարումներ աշխատակիցներին	(295,304)	(257,619)
Հարկերի գծով դրամական միջոցների վճարումներ	(125,189)	(112,911)
Կենսաթոշակային վճարների գծով դրամական միջոցների վճարումներ	(11,403)	(9,370)
Գործառնական այլ գործունեության գծով դրամական միջոցների վճարումներ	(1,888)	(136)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների համախառն վճարումներ	(720,357)	(630,383)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	10,305	67,072
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների, ոչ նյութական և այլ երկարաժամկետ ակտիվների վաճառքից դրամական միջոցների մուտքեր	-	-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների համախառն մուտքեր	-	-
Հիմնական միջոցների, ոչ նյութական և այլ երկարաժամկետ ակտիվների ձեռքբերման համար դրամական միջոցների վճարումներ	14,168	13,347
Ներդրումային այլ գործունեությունից դրամական միջոցների համախառն վճարումներ	-	23,311
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների համախառն վճարումներ	14,168	36,658
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(14,168)	(36,658)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված փոխառություններից դրամական միջոցների մուտքեր	-	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների համախառն մուտքեր	-	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	-	-
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	(3,863)	30,414
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	19,802	25,121
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների վրա	12,059	(35,733)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	27,998	19,802

Գործադիր տնօրեն

Վահագն Մարաբյան

Գլխավոր հաշվապահ

Էլկտորյա Հովհաննիսյան



Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող վիճակագրությունների հետ մեկտեղ (ԼԶ 10-29):

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«Գաֆէսճեան Թանգարան» հիմնադրամը («Հիմնադրամ») կամավոր գույքային վճարումների հիման վրա ստեղծված ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է մարդասիրական, բարեգործական, մշակութային, կրթական և այլ հանրօգուտ նպատակներ: Հիմնադրամը հիմնադրվել է 2002թ. ապրիլի 26-ին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության և Գաֆէսճեան Թանգարան հիմնադրամ Ինք-ի («Հիմնադիրներ») միջև կնքված պայմանագրի: Հիմնադրամը ստեղծվել է հասարակական աշխատանքների ծրագրի միջոցով տնտեսական զարգացմանը նպաստելու նպատակով, Երևանի Կասկադ համալիրի շինարարության ավարտման միջոցով Երևան քաղաքի վերազարգացման և բարեկարգման նպատակով, ինչպես նաև Ջերարդ Լ. Գաֆէսճեան ժամանակակից արվեստի թանգարանի («ՋիԷՄիԷՄիԷ») և այգու կառուցման միջոցով ժամանակակից արվեստի և մշակութային զբոսաշրջության խթանման նպատակով, նպատակ ունի աջակցել Հայաստանի Հանրապետության տնտեսական և մշակութային զարգացմանը, շրջակա միջավայրի պաշտպանությանը, հասարակական բարգավաճմանը:

Հիմնադրամի գործունեության հիմնական տեսակներն են.

- արվեստի ցուցադրություն արվեստանմուշների միջոցով,
- համերգաշարերի, դասախոսությունների և «Հանդիպում արվեստի հետ» միջոցառումների կազմակերպում,
- երեխաների ստեղծագործականության բարձրացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում,
- գույքի և տարածքների վարձակալությամբ տրամադրում,
- ապրանքների մանրածախ վաճառքի իրականացում,
- հանրային սննդի ծառայությունների մատուցում և այլն:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներն են Քերին Բարադարանը, Քերի Մարտինսոնը և Թովմաս Գաֆէսճեանը:

Հիմնադրամն ունի մեկ դուստր ընկերություն՝ «Մի Մի Էջ Փրովորթիս» ՓԲԸ-ն (միասին՝ «Խումբ»), որի բաժնեմասն ամբողջությամբ իրեն է պատկանում: «Մի Մի Էջ Փրովորթիս» ՓԲԸ-ն գրանցվել է 2015թ. դեկտեմբերի 1-ին, իսկ Ընկերության վերահսկողությունը հիմնադրամին է անցել 2015թ. դեկտեմբերի 30-ին:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի աշխատակիցների գուցակային թվաքանակը կազմել է 58 (հիսուսութ) աշխատող, իսկ 2022թ. դեկտեմբերի 31-ին՝ 57 (հիսունյոթ) աշխատող:

2. Հաշվետվությունների պատրաստման և համախմբման հիմունքները, գնահատումների և դատողությունների կիրառումը

2.1 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ) ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (<<ՄՄՄ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմունքների»:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա, բացառությամբ ներդրումային գույքի, որը չափված է իրական արժեքով:

Խումբը պատրաստում է իր համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաշվեգրման հիմունքով, բացառությամբ դրամական միջոցների հոսքերի մասին տեղեկատվության:

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույն կերպով է արտացոլում համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և խմբի գործարքների բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Խմբի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը հազարների ճշտությամբ է:

2.2 Հաշվետվությունների համախմբման հիմունքները

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները քաղկացած են Հիմնադրամի և Դուստր կազմակերպության առանձին հաշվետվություններից 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Դուստր կազմակերպության հաշվետվություններն ամբողջությամբ համախմբվում են Հիմնադրամի կողմից վերահսկողություն ձեռք բերելու պահից սկսած և շարունակում համախմբվել մինչև այդ վերահսկողությունը չի դադարում: Դուստր կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են մայր կազմակերպության հետ միևնույն ժամանակաշրջանի համար՝ օգտագործելով հետևողական հաշվապահական հաշվառման քաղաքականություններ: Ներխմբային բոլոր հաշիվները, գործարքները, ներխմբային գործունեության արդյունք հանդիսացող չիրացված օգուտներն ու վնասները և շահաբաժինները ամբողջությամբ քացառվում են:

2.3 Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

ՏՀՄՄ-ի համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Խմբի ղեկավարությունը կատարի կարևոր գնահատումներ և դատողություններ, որոնք ազդեցություն են գործում հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա առավելագույն էական ազդեցություն ունեցող հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարված կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- 🔸 Ծանոթագրություն 3.2 և 4 – Հիմնական միջոցներ,
- 🔸 Ծանոթագրություն 3.3 և 6 – Ներդրումային գույք,
- 🔸 Ծանոթագրություն 13 – Փոխառություններ:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր

3.1 Արտարժույթային գործարքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի (<< ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ << ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը դրամի նկատմամբ:

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՄՆ դոլար	404.79	393.57
Եվրո	447.90	420.06

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը):

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Խմբի հիմնական միջոցների բոլոր դասերը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված են սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է գնման գինը՝ ներառյալ ներկրման տուրքերը և չփոխատուցվող հարկերը՝ հանած առևտրային զեղչերը և արտոնությունները, ակտիվի՝ համապատասխան վայր հասցենյու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի ընդունում: Ինտուիզակիորեն կապված ցանկացած ծախսումները: Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքում ծախսումների ճանաչումը դադարեցվում է, երբ միավորը գտնվում է այն վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է, որպեսզի այն հնարավոր լինի օգտագործել ղեկավարության նախանշած նպատակներով:

Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվարկվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Սկզբնական արժեքը ներառում է մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն հիմնադրամի որոշեցրած քաղաքականության: Այս ակտիվների մաշվածությունը ևս հաշվարկվում է, երբ դրանք դառնում են պատրաստ իրենց նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցի միավորի օտարման կամ դուրս գրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի տարբերություն: Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ վնասը ներառվում է շահույթում կամ վնասում, որը միավորը ապաճանաչվում է:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, ճանաչվում են հաշվեկշռային արժեքում, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարվում են ճանաչման չափանիշները: Այդ փոխարինված մասերի հաշվեկշռային արժեքը ապաճանաչվում է: Այլ հետագա ծախսումները ճանաչվում են հաշվեկշռային արժեքում միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարվելու ժամանակաշրջանում:

Ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով հաշվարկի գծային մեթոդը հիմնական միջոցի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Որոշ դեպքերում, երբ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները կլանվում են մեկ այլ ակտիվի արտադրության ընթացքում, մաշվածության գումարը կազմում է այդ ակտիվի արժեքի մի մասը և ներառվում է դրա հաշվեկշռային արժեքում: Ակտիվի մաշվածությունն սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է ղեկավարության նախանշած նպատակով օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվի՝ ՖՀՄՍ 5-ի համաձայն որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու (կամ որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբում ներառվելու) և ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության գնահատված ժամկետները ներկայացված են ստորև.

➔ Ծեփեր և շինություններ	20-30 տարի
➔ Մեքենա և տարբավորումներ	1-5 տարի
➔ Հաշվողական և համակարգչային տեխնիկա	1-5 տարի
➔ Այլ հիմնական միջոցներ	1-8 տարի

Ակտիվների մնացորդային արժեքները, օգտակար ծառայության ժամկետները և մաշվածության մեթոդները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջի դրությամբ և, անհրաժեշտության դեպքում, ճշգրտվում առաջընթաց:

3.3 Ներդրումային գույք

Ներդրումային գույքը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով՝ ներառյալ գործարքի ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո ներդրումային գույքը հաշվառվում է իրական արժեքով, որն արտացոլում է հաշվետու ամսաթվի դրությամբ շուկայական պայմանները: Ներդրումային գույքի իրական արժեքի փոփոխությունից օգուտները և վնասները ներառվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որում առաջանում են: Իրական արժեքները գնահատվում են հավատարմագրված արտաքին անկախ գնահատողի կողմից:

Ներդրումային գույքն ապաճանաչվում է, երբ այն օտարվում է, կան այդ ներդրումային գույքը դուրս է գալիս շահագործումից, և օտարումից ոչ մի ապագա տնտեսական օգուտ չի ակնկալվում: Ակտիվի գծով օտարումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ապաճանաչման ժամանակաշրջանում:

Ներդրումային գույքից կամ ներդրումային գույքին կատարվում են վերադասակարգումներ միայն այն դեպքում, երբ դրա օգտագործման եղանակի մեջ փոփոխություն է տեղի ունեցել: Ներդրումային գույքից դեպի սեփականատիրոջ կողմից զբաղեցված գույք փոխանցման դեպքում հետագա հաշվառման համար ելակետային արժեքը օգտագործման եղանակի փոփոխության ամսաթվի դրությամբ իրական արժեքն է: Եթե սեփականատիրոջ կողմից զբաղեցված գույքը դառնում է ներդրումային, նման գույքը հաշվառվում է հիմնական միջոցների հաշվառման քաղաքականության համաձայն՝ մինչև օգտագործման եղանակի փոփոխության ամսաթիվը:

Ներդրումային գույքի հաշվառման համար ընտրվել է իրական արժեքի մոդելը՝ համաձայն ՀՀՄՄ 40-ի: ՀՀՄՄ 40-ը թույլ է տալիս, որ ներդրումային գույքը հաշվառվի սկզբնական արժեքով՝ նվազեցված կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Այս դեպքում կապահանջվի սկզբնական արժեքի և մաշվածության դրույքների մասին լրացուցիչ բացահայտումներ: Բացի այդ, ՀՀՄՄ 40-ը կապահանջի ծանոթագրության տեսքով բացահայտում սկզբնական արժեքով հաշվառված ներդրումային գույքի իրական արժեքի վերաբերյալ: Այդ իսկ պատճառով, այնուամենայնիվ, անհրաժեշտ կլինի որոշել իրական արժեքը:

Դուստր կազմակերպությանը պատկանող գույքը, որը վարձակալվում և զբաղեցվում է Հիմնադրամի կողմից, համախմբված ֆինանսական հաշվետվություններում չի որակվել որպես ներդրումային գույք, քանի որ տնտեսական միավորի տեսանկյունից այդ գույքը Խմբի կողմից զբաղեցված գույք է:

3.4 Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ և գուղվիլ

Ձեռնարկատիրական գործունեության միավորումները հաշվառվում են՝ օգտագործելով ձեռքբերման մեթոդը: Ձեռքբերման արժեքը չափվում է՝ որպես ձեռքբերման օրվա դրությամբ փոխանցված հատուցման իրական արժեքի և ձեռքբերվող կազմակերպության ցանկացած չվերահսկող բաժնեմասի հանրագումար: Ձեռքբերումից առաջացած ծախսումները ծախսագրվում և ներառվում են վարչական ծախսերում:

Գուղվիլը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը հանդիսանում է փոխանցված հատուցման և ճանաչված չվերահսկող բաժնեմասի հանրագումարի և ձեռքբերված որոշելի գուտ ակտիվների և ստանձնած պարտավորությունների դրական տարբերությունը: Եթե հատուցումն ավելի քիչ է, քան ձեռքբերված դուստր կազմակերպության գուտ ակտիվների իրական արժեքը, ապա տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Սկզբնական ճանաչումից հետո գուղվիլը չափվում է սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կուտակված ցանկացած կորուստ:

3.5 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են ակտիվի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

⚡ Համակարգչային ծրագրեր	5 տարի
⚡ Լիցենզիաներ և վստահագրեր	1 տարի
⚡ Կինոնկարներ	5 տարի
⚡ Գ. Խանջյանի որմնանկարի ցուցադրման իրավունք	20 տարի

Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվների ամորտիզացիայի ժամկետը և ամորտիզացիայի մեթոդը վերանայվում են նվազագույնը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ակնկալվող օգտակար ծառայության ժամկետի կամ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտների սպասման մոդելի փոփոխությունները հաշվառվում են՝ փոփոխելով համապատասխանաբար ամորտիզացիոն ժամկետը կամ մեթոդը, և դիտվում են որպես հաշվապահական գնահատումներում փոփոխություններ:

Անորոշ օգտակար ծառայություն ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում: Անորոշ ժամկետի գնահատումը վերանայվում է յուրաքանչյուր տարի՝ որոշելու արդյոք անորոշ ժամկետը շարունակվում է ողջամիտ մնալ: Եթե ոչ, ապա օգտակար ծառայության ժամկետը փոփոխվում է և դառնում որոշակի՝ առաջընթաց կիրառմամբ:

Ոչ նյութական ակտիվն ապաճանաչվում է օտարման ժամանակ, կամ երբ օգտագործումից կամ օտարումից այլևս տնտեսական օգուտներ չեն ակնկալվում: Ոչ նյութական ակտիվի ապաճանաչումից օգուտները կամ վնասները չափվում են որպես ակտիվի օտարումից գուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

3.6 Վարձակալություն

Պայմանագրի սկզբում Խումբը պետք է գնահատի արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը:

Խումբը որպես վարձակալ

Կարճաժամկետ վարձակալությունների և այն վարձակալությունների գծով, որոնց դեպքում հիմքում ընկած ակտիվը փոքրարժեք է, Խումբը այդ վարձակալությունների հետ կապված վարձավճարները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչում է որպես ծախս (ծախսում) գծային հիմունքով:

Այն վարձակալությունը, որի չեղյալ չհամարվող ժամանակաշրջանը գերազանցում է 12 ամիսը և վարձակալության հիմքում ընկած ակտիվը չի համարվում փոքրարժեք, դիտարկվում է որպես երկարաժամկետ վարձակալություն: Երկարաժամկետ վարձակալության գծով ֆինանսական վիճակում վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ Խումբը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը:

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ Խումբը չափում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնական արժեքով: Մեկնարկի ամսաթվին Խումբը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք դեռևս չեն վճարվում այդ ամսաթվին: Վարձավճարները պետք է զեղչվեն կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել: Եթե այդ դրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, Խումբը պետք է կիրառի վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Խումբը որպես վարձատու

Խումբը պետք է իր վարձակալություններից յուրաքանչյուրը դասակարգի կամ որպես գործառնական վարձակալություն, կամ որպես ֆինանսական վարձակալություն:

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, եթե փոխանցվում են հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները: Վարձակալությունը դասակարգվում է որպես գործառնական, եթե չեն փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները:

Վարձակալության մեկնարկի ամսաթվին Խումբը ֆինանսական վարձակալության տրված ակտիվները իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պետք է ճանաչի որպես ակտիվ և ներկայացնի դրանք որպես դեբիտորական պարտք՝ վարձակալությունում գուտ ներդրումներին հավասար գումարով:

Խումբը ճանաչում է վարձակալության ժամկետի ընթացքում առաջացած ֆինանսական եկամուտը՝ հիմնվելով մի սխեմայի վրա, որը արտացոլում է վարձակալության շրջանակներում վարձատուի գուտ ներդրումների նկատմամբ հաստատուն պարբերական հատույցադրույք:

Խումբը գործառնական վարձակալությունից ստացվող վարձավճարները ճանաչում է որպես եկամուտ գծային հիմունքով:

3.7 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման ենթադրվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները:

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է՝ կիրառելով «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» (FIFO) բանաձևը: Փոխադարձ փոխարկելի ցանկից առաջինը պաշարների, ինչպես նաև հատուկ ծրագրերի համար նախատեսված և արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը որոշվում է դրանց ծախսումների հստակ առանձնացման միջոցով:

Երբ պաշարները վաճառվում են, դրանց հաշվեկշռային արժեքը ճանաչվում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը: Պաշարների ինքնարժեքի ցանկացած իջեցման գումար մինչև իրացման գուտ արժեք և պաշարների բոլոր կորուստները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ կատարվել է ինքնարժեքի իջեցումը կամ առաջացել է կորուստը: Պաշարների ցանկացած իջեցման գումարի ցանկացած վերականգնման գումար, որն առաջացել է իրացման գուտ արժեքի աճից, ճանաչվում է որպես պաշարների՝ ծախս ճանաչված գումարի նվազեցում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ տեղի է ունեցել վերականգնումը:

3.8 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ **Խումբը** դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապահանջվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապահանջվում են երբ դրանք մարվում են վճարման ենթակա չեն չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Սկզբնական ճանաչման պահին Խումբը պետք է ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափի իր իրական արժեքով՝ գումարած կամ հանած, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Խմբի ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորություններն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 26-ում:

Խումբը պետք է ճանաչի կորստի պահուստ ակնկալվող պարտքային կորուստների գծով ֆինանսական ակտիվների, վարձակալության գծով դերիտորական պարտքի, պայմանագրի գծով ակտիվի կամ փոխատվության հանձնառության և ֆինանսական երաշխավորության պայմանագրի համար, որոնց նկատմամբ կիրառվում են արժեզրկման պահանջները:

Ցուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը պետք է ֆինանսական գործիքի համար կորստի պահուստը չափի ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող կորուստներին հավասար գումարով, եթե այդ ֆինանսական գործիքի համար պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն մեծացել է:

Եթե հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն չի մեծացել, Խումբը պետք է այդ ֆինանսական գործիքի համար կորստի պահուստը չափի 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով:

Դերիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են ձեռքբերմանը կամ թողարկմանը, իսկ հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսի մեթոդը՝ հանած արժեզրկման պահուստը:

Ընթացիկ եւ ոչ ընթացիկ առևտրային դերիտորական պարտքերի գծով վճարունակության ակնկալվող կորուստները գնահատելու նպատակով կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոտեցումը՝ օգտագործելով ողջ ժամկետի համար վճարունակության ակնկալվող կորուստների գնահատում: Այս գործընթացում գնահատվում է առևտրային դերիտորական պարտքերի չվճարման հավանականությունը: Այդ հավանականությունը, այնուհետև, բազմապատկվում է կանխատեսվող կորստի գումարի չափով՝ առևտրային դերիտորական պարտքերի ողջ ժամկետի գծով ակնկալվող կորստի գնահատման նպատակով: Չուտ արժեքով ներակայացվող առևտրային դերիտորական պարտքերի գծով, այդպիսի պահուստները հաշվառվում են առանձին հաշվով՝ ներառելով որպես իրացման ինքնարժեք համապարփակ ֆինանսական արդյունքի հաշվետվությունում: Առևտրային դերիտորական պարտքերի անհավաքելիության հաստատման դեպքում, ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը հաշվանցվում է այդ ակտիվի գծով ձևավորված պահուստի հաշվին:

Խումբը պետք է դասակարգի բոլոր ֆինանսական պարտավորությունները որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող, բացառությամբ՝

- ա) «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական պարտավորությունների,
- բ) ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապահանջման պայմաններին, կամ երբ կիրառվում է շարունակական ներգրավվածության մոտեցումը:
- գ) ֆինանսական երաշխավորության պայմանագրերի

Առևտրային կրեդիտորական և այլ կարճաժամկետ դրամային պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսային մեթոդը:

3.9 Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

<իմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մշակվող ակտիվները վերանայվում են արժեզրկման համար, երբ իրադարձություններն ու հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը ակտիվի կամ դրամաստեղծ միավորի իրական արժեքից՝ հանած վճարների ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է դրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է

մինչև փոխհատուցվող գումարը: Չվերազնահատված ակտիվի գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, վերազնահատված ակտիվի գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է այլ համապարփակ շահույթում կամ վնասում այնքանով, որքանով արժեզրկումից կորուստը չի գերազանցում այդ նույն ակտիվի վերազնահատումից արժեքի աճը: Վերազնահատված ակտիվի գծով այդպիսի արժեզրկումից կորուստը նվազեցնում է այդ ակտիվի վերազնահատումից առաջացած արժեքը:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը ավելացվում է մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերազնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և ավելացնում է այդ ակտիվի վերազնահատումից արժեքի աճը: Այնուամենայնիվ այնքանով, որքանով նույն վերազնահատված ակտիվի գծով արժեզրկումից կորուստը նախկինում ճանաչվել է շահույթում կամ վնասում, արժեզրկումից կորստի հակադարձումը ևս ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Գուղվի

Գուղվի արժեզրկումը ստուգվում է տարեկան կտրվածքով, ինչպես նաև, երբ հանգամանքները ցույց են տալիս, որ հաշվեկշռային արժեքը կարող է արժեզրկված լինել:

Գուղվի արժեզրկումը որոշվում է փոխհատուցվող գումարի գնահատման միջոցով այն դրամաստեղծ միավորի (կամ դրամաստեղծ միավորների խմբի) համար, որին գուղվի վերաբերում է: Երբ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը ավելի քիչ է, քան դրա հաշվեկշռային արժեքը, ապա ճանաչվում է արժեզրկման կորուստ: Գուղվի գծով արժեզրկման կորուստները չեն կարող հակադարձվել ապագա ժամանակաշրջաններում:

3.10 Շնորհներ

Շնորհները, ներառյալ իրական արժեքով չափվող ոչ դրամային շնորհները, չպետք է ճանաչվեն, քանի դեռ չկա հիմնավոր հավաստիացում, որ Խումբը բավարարելու է դրանց կցված պայմանները, և շնորհները ստացվելու են:

Երբ շնորհը վերաբերում է ծախսային հոդվածին, այն ճանաչվում է եկամուտ այն ժամանակաշրջանների համար, որոնցում պարբերական հիմունքով անհրաժեշտ է համապատասխանեցնել շնորհը նախատեսված հատուցվող ծախսերին:

Երբ շնորհը վերաբերում է ակտիվներին, այն ճանաչվում է որպես հետաձգված եկամուտ և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվառվում է հավասարաչափ գումարներով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

Շնորհը, որը ստացման ենթակա է դառնում ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է Խմբին տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում այն հաշվետու ժամանակաշրջանում, որը այն դառնում է ստացման ենթակա:

3.11 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և այդ պարտականությունը կարելի է արժանահավատորեն չափել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունն էական է, ապա պահուստի գումարը իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Չեղյման դրույքը այն դրույքն է՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Չեղյման դրույքը չի արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները վերանայվում են և ճշգրտվում են՝ ընթացիկ լավագույն գնահատականն արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը հակադարձվում է: Պահուստը օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.12 Հասույթ

Խումբը պետք է հաշվառի գնորդի հետ պայմանագիրը միայն այն դեպքում, եթե բավարարվում են ստորև նկարագրված բոլոր չափանիշները՝

ա) պայմանագրի կողմերը հաստատել են պայմանագիրը (գրավոր, բանավոր կամ այլ սովորական բիզնես գործելակերպի համաձայն) և պարտավորվում են կատարել իրենց համապատասխան պայմանագրային պարտականությունները:

բ) Խումբը կարող է որոշակիացնել փոխանցվող ապրանքներին կամ ծառայություններին վերաբերող յուրաքանչյուր կողմի իրավունքները:

գ) Խումբը կարող է որոշակիացնել փոխանցվող ապրանքների կամ ծառայությունների վճարման պայմանները:

դ) պայմանագիրն ունի առևտրային բնույթ (այսինքն՝ պայմանագրի արդյունքում ակնկալվում է, որ կփոփոխվեն Խմբի ապագա դրամական միջոցների հոսքերի հետ կապված ռիսկերը, ժամկետները կամ գումարը): և

ե) հավանական է, որ Խումբը կստանա այն հատուցումը, որը Խումբը իրավունք ունի ստանալու գնորդին փոխանցվող ապրանքների կամ ծառայությունների դիմաց՝ որպես փոխանակում:

Խումբը պետք է ճանաչի հասույթ, երբ կատարում (բավարարում) է կատարման պարտականությունը՝ խոստացված ապրանքը կամ ծառայությունը (այսինքն՝ ակտիվը) փոխանցելով գնորդին: Ակտիվը համարվում է փոխանցված, երբ գնորդն այդ ակտիվի նկատմամբ ձեռք է բերում հսկողություն:

Երբ կատարման պարտականությունը կատարվում է, Խումբը պետք է ճանաչի որպես հասույթ՝ գործարքի գնի այն մասը, որը վերագրվում է տվյալ կատարման պարտականությանը:

Գործարքի գինը որոշելիս Խումբը պետք է դիտարկի պայմանագրի պայմանները և իր սովորական բիզնես գործելակերպը: Գործարքի գինը հատուցման այն գումարն է, որը Խումբը ակնկալում է ստանալ որպես փոխանակում գնորդին խոստացված ապրանքները կամ ծառայությունները փոխանցելու դիմաց, բացառությամբ երրորդ կողմերի անուհից հավաքագրված գումարները (օրինակ՝ վաճառքի որոշ հարկերը):

Մատուցված ծառայություններից ստացված հասույթը ճանաչվում է շահույթում կամ վնասում կատարման պարտականությունների կատարման ժամանակաշրջանում, եթե հաճախորդը ստանում և սպառում է ծառայությունները միաժամանակ: Այս դեպքերում ծառայության կատարման առաջընթացը (ավարտվածության աստիճանը) գնահատվում է արդյունքների մեթոդի հիման վրա՝ ժամանակային համամասնությամբ:

Եթե հաճախորդը մատուցված ծառայության արդյունքը չի սպառում ստացմանը զուգընթաց, կամ ծառայության մատուցման ընթացքում չի ստեղծվում հաճախորդի կողմից վերահսկելի ակտիվ, կամ կազմակերպությունը չունի իրավաբանորեն ամրագրված իրավունք վճարումներ ստանալու մինչև այդ ամսաթիվը կատարման պարտականության կատարման դիմաց, ապա հասույթը ճանաչվում է այն պահին, երբ կատարման պարտականությունը կատարվել է ամբողջությամբ:

Այն դեպքերում, երբ հասույթի ճանաչման և վճարման միջև ընկած ժամանակահատվածը չի գերազանցում 12 ամիսը, Խումբը հասույթի գումարը որոշելիս չի հաշվարկում ֆինանսավորման բաղադրիչ:

3.13 Հարկեր

Գահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարման ենթակա հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված շահութահարկը հաշվարկվում է ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների, տեղափոխված չօգտագործված հարկային զեղչերի և չօգտագործված հարկային վնասների համար այնքանով, որքանով հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց այդ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները, տեղափոխված չօգտագործված հարկային զեղչերը և վնասները հնարավոր կլինի օգտագործել, բացառությամբ այն հետաձգված հարկային ակտիվների, որոնք առաջանում են ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքի ներքո, որը բիզնեսների միավորում չէ, այդ գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում Խումբը վերագնահատում է չճանաչված հետաձգված հարկային ակտիվները: Խումբը ճանաչում է նախկինում չճանաչված հետաձգված հարկային ակտիվներն այն չափով, որով հավանական է դարձել ապագա հարկվող շահույթների հաշվին հետաձգված հարկային ակտիվների փոխհատուցումը:

Հետաձգված հարկային պարտավորությունը ճանաչվում է բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ այն հետաձգված հարկային պարտավորությունների, որոնք առաջանում են գույվիլի սկզբնական

ճանաչումից, կամ ակտիվի, կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը բիզնեսների միավորում չէ և գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի հարկային մարմիններին (կփոխհատուցվի հարկային մարմինների կողմից)՝ կիրառելով հարկերի դրույքները և հարկային օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները և հարկային օրենքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումը արտացոլում է հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Խումբը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Խումբը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում պետք է վերականգնվի այնքանով, որքանով հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Խումբը մտադիր է մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվները զուտ հիմունքով կամ իրացնել ակտիվները և մարել պարտավորությունները միաժամանակ՝ յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների նշանակալի գումարների մարում կամ փոխհատուցում:

Մովորական գործունեությունից շահույթին կամ վնասին վերաբերող հարկի գծով ծախսը (եկամուտը) ներկայացվում է համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում:

Շահույթի կամ վնասի կազմում չճանաչված հոդվածների գծով ճանաչված հետաձգված հարկը նույնպես ճանաչվում է շահույթի կամ վնասի կազմից դուրս: Հետաձգված հարկային հոդվածները ճանաչվում են դրան վերաբերող գործարքներին զուգահեռ՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ անմիջապես սեփական կապիտալում:

Իրացման հարկեր

Հասույթը, ծախսերը և ակտիվները ճանաչվում են զուտ իրացման հարկերից՝ քացառությամբ հետևյալ դեպքերի.

- երբ իրացման հարկն առաջացել է այնպիսի ակտիվների կամ ծառայությունների գնումից, որի գծով այն չի հատուցվում հարկային մարմինների կողմից: Այս դեպքում հարկը ճանաչվում է որպես ակտիվի ձեռքբերման ինքնարժեքի մաս կամ որպես ծախսային հոդված համապատասխանաբար,

- դերիտորական և կրեդիտորական պարտքերն արտացոլելիս, որոնք ներկայացված են իրացման հարկերի գումարը ներառյալ:

Հարկային մարմիններից հատուցման ենթակա կամ պարտավորություն հանդիսացող իրացման հարկերի գծով գումարները ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես դերիտորական կամ կրեդիտորական պարտք:

3.14 Աշխատակիցների գծով հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի քացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Խմբին մատուցել է ծառայություն, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղջված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչվում է.

- որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղջված գումարը, Ընկերությունը այդ տարբերությունը ճանաչում է որպես ակտիվ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

- որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

3.15 Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն վերագրելի են որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, Խումբի կողմից կապիտալացվում են՝ որպես այդ ակտիվի արժեքի մաս: Խումբը այդ փոխառության ծախսումները ճանաչում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք կատարվել են: Այնքանով, որքանով Խումբի միջոցները բացառապես փոխ են առնվում որակավորվող ակտիվ ձեռք բերելու նպատակով, փոխառության ծախսումների գումարը, որը ենթակա է այդ ակտիվի վրա կապիտալացման, Խումբը որոշում է որպես փոխառության փաստացի ծախսումներ, որոնք առաջանում են այդ փոխառությունից տվյալ ժամանակաշրջանում՝ հասնած այդ փոխառու միջոցների ժամանակավոր ներդրումից ստացվող ցանկացած եկամուտ:

Այնքանով, որքանով Խումբը միջոցները փոխ է առնում ընդհանուր նպատակներով և օգտագործում է որակավորվող ակտիվի ձեռքբերման (կառուցման, արտադրության) նպատակով, կապիտալացման ենթակա փոխառության ծախսումների գումարը որոշվում է՝ այդ ակտիվի գծով ծախսերի նկատմամբ կիրառելով կապիտալացման դրույքը: Կապիտալացման դրույքը տվյալ ժամանակաշրջանի ընթացքում չմարված փոխառություններին վերաբերող փոխառության ծախսումների միջին կշռված մեծությունն է, բացառությամբ այն փոխառությունների, որոնք բացառապես կատարվել են որակավորվող ակտիվի ձեռքբերման (կառուցման, արտադրության) նպատակով: Մի ժամանակաշրջանում կապիտալացված փոխառության ծախսումների գումարը չպետք է գերազանցի այդ ժամանակաշրջանում կատարված փոխառության ծախսումներին:

Կապիտալացման մեկնարկը

Խումբը սկսում է փոխառության ծախսումների կապիտալացումը՝ որպես որակավորվող ակտիվի արժեքի մաս, մեկնարկի ամսաթվին: Կապիտալացման համար մեկնարկի ամսաթիվը այն ամսաթիվն է, երբ առաջին անգամ Խումբը քավարարում է հետևյալ բոլոր պայմանները.

- ակտիվի համար կատարում է ծախսեր,
- կատարում է փոխառության ծախսումներ և
- ձեռնարկում է այն աշխատանքները, որոնք անհրաժեշտ են ակտիվը օգտագործման կամ վաճառքի նախատեսված վիճակի բերելու համար:

Խումբը փոխառության ծախսումների կապիտալացումը կասեցնում և սկսում է դրանց ծախս ճանաչումը, երբ երկարատև ժամանակահատվածի ընթացքում ակտիվի վրա կատարվող աշխատանքներն ընդհատվում են:

Խումբը դադարեցնում է փոխառության ծախսումների կապիտալացումը, երբ որակավորվող ակտիվը օգտագործման կամ վաճառքի նախատեսված վիճակի բերելու համար անհրաժեշտ աշխատանքներն ըստ էության կատարված են:

3.16 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները բանկում և դրամարկղում, ինչպես նաև երեք ամիս և պակաս ժամկետայնությամբ ընթացիկ ավանդներն ու այլ կարճաժամկետ բարձր իրացվելի ներդրումները:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պատրաստվում է ուղղակի մեթոդով, ըստ որի բացահայտվում են համախառն դրամական մուտքերի և համախառն դրամական վճարումների հիմնական դասերը: Դրամական միջոցների հոսքերը, որոնք առաջացել են արտարժույթով կատարված գործառնություններից, գրանցվում են Խումբի գործառնական արժույթով՝ արժույթի գումարի նկատմամբ կիրառելով գործառնական արժույթի և արտարժույթի միջև դրամական հոսքերի օրվա դրությամբ ամկա փոխանակման փոխարժեքը:

Վճարված և ստացված տոկոսներից ու շահաբաժիններից առաջացող դրամական միջոցների հոսքերը բացահայտվում են առանձին: Դրանցից յուրաքանչյուրը մի ժամանակաշրջանից մյուսը հետևողականորեն դասակարգվում են որպես գործառնական, ներդրումային կամ ֆինանսավորման գործունեություն:

Շահութահարկի գծով առաջացող դրամական միջոցների հոսքերը բացահայտվում են առանձին և դասակարգվում որպես գործառնական գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքեր, եթե դրանք չեն կարող հստակ որոշակիացվել ֆինանսավորման կամ ներդրումային գործունեություններից որևէ մեկի հետ:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ

	Շենքեր և շինություններ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական և տնտեսական գույք	Այլ հիմնական միջոցներ	Հոդամասեր	Ընդամենը
Մեքենական արժեք							
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	3,887,443	391,313	4,225	258,701	8,203	945,471	5,495,366
Ավելացում	7,898	8,639	-	-	2,296	-	18,833
Նվազեցում	-	(3,133)	-	(197)	-	-	(3,330)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,895,341	396,819	4,225	258,504	10,499	945,471	5,510,859
Ավելացում	4,408	8,228	-	-	3,312	-	15,948
Նվազեցում	-	(3,927)	-	(1,287)	-	-	(5,214)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,899,749	401,120	4,225	257,217	13,811	945,471	5,521,593
Կուտակված մաշվածություն և արժեզրկում							
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	1,878,397	325,997	4,225	258,229	7,572	-	2,474,420
Ավելացում	151,805	11,676	-	202	172	-	163,855
Նվազեցում	-	(2,862)	-	(197)	-	-	(3,059)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,030,202	334,811	4,225	258,234	7,744	-	2,635,216
Ավելացում	152,193	14,138	-	50	523	-	166,904
Նվազեցում	-	(3,746)	-	(1,287)	-	-	(5,033)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,182,395	345,203	4,225	256,997	8,267	-	2,797,087
Հաշվեկշռային արժեք							
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,865,139	62,008	-	270	2,755	945,471	2,875,643
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,717,354	55,917	-	220	5,544	945,471	2,724,506

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 529,534 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 532,678 հազար ՀՀ դրամ) սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են գնումային հաշվեկշռային արժեքով:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավտոմեքենաների վերաբերյալ շնորհների հաշվին ձեռք բերված հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը կազմել է 2,306,920 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,431,675 հազար ՀՀ դրամ):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալված և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ծախսումների հաշվեկշռային արժեքը կազմել է 183,952 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 215,630 հազար ՀՀ դրամ):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների օգտագործման սահմանափակումներ չկան:

5 Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Օգտագործման համար ոչ մատչելի շենքեր	3,481,683	3,481,683
Օգտագործման համար ոչ մատչելի սարքավորումներ	205,563	205,563
Օգտագործման համար ոչ մատչելի արտադրական գույք, տնտեսական գույք	46,423	46,423
Օգտագործման համար ոչ մատչելի այլ հիմնական միջոցներ	13,839	13,839
	3,747,508	3,747,508

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակտիվներին վերաբերող շնորհների հաշվին առկա օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը կազմել է 3,419,743 հազար ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,419,743 հազար ՀՀ դրամ):

6 Ներդրումային գույք

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Սկզբնական մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	357,366	187,390
Ավելացումներ (ձեռնարկատիրական գործունեության միավորումներից)	-	-
Վերադասակարգում հիմնական միջոցից որպես ներդրումային գույք օգտագործման եղանակի փոփոխության պատճառով	-	-
Վերադասակարգում ներդրումային գույքից որպես հիմնական միջոց օգտագործման եղանակի փոփոխության պատճառով	-	-
Իրական արժեքի ճշգրտումից զուտ օգուտ (վնաս)	437,734	169,976
Վերջնական մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	795,100	357,366

Որևէ սահմանափակում ներդրումային գույքի իրացման ուղղությամբ գոյություն չունի, ինչպես նաև առկա չեն պայմանագրային պարտավորություններ ներդրումային գույքի գնման, կառուցման կամ կատարելագործման կամ ներդրումային գույքի վերանորոգման, պահպանման կամ բարելավման գծով:

Ներդրումային գույքը հաշվառվում է իրական արժեքով, որը որոշվել է «ՊիՎիԷմ» ՍՊԸ-ի կողմից: «ՊիՎիԷմ» ՍՊԸ-ն լիցենզավորված գնահատման ընկերություն է և հանդիսանում է տվյալ տեսակի ներդրումային գույք գնահատելու փորձագետ:

7 Ոչ կյուրթական ակտիվներ

Հազար դրամ	Համակարգչային ծրագրեր	Հեղինակային իրավունք	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	5,933	15,658	21,591
Ավելացում	-	2,545	2,545
Նվազեցում	-	-	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,933	18,203	24,136
Ավելացում	-	368	368
Նվազեցում	(2,688)	-	(2,688)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,245	18,571	21,816

Կուտակված ամորտիզացիա և արժեզրկում			
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	4 438	15 132	19 570
Ավելացում	199	443	642
Նվազեցում	-	-	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,637	15,575	20,212
Ավելացում	199	288	487
Նվազեցում	(2,688)	-	(2,688)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,148	15,863	18,011
Հաշվեկշռային արժեք			
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,296	2,628	3,924
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,097	2,708	3,805

8 Հետաձգված հարկային ակտիվներ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Նվազագույն շահութահարկ	7,646	7,646
	<u>7,646</u>	<u>7,646</u>

9 Պաշարներ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Հումք և նյութեր	159,554	150,077
Ապրանքներ	12,978	12,962
Պաշարների արժեքի նվազում	(617)	(788)
	<u>171,915</u>	<u>162,251</u>

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ եկամուտներին վերաբերող շնորհների հաշվին ձեռք բերված պաշարների հաշվեկշռային արժեքը կազմել է 91,171 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 91,673 հազար դրամ):
2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պաշարների օգտագործման սահմանափակումներ չկան:

10 Տրված կանխավճարներ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Տրված կանխավճարներ պաշարների գծով	5,159	2,052
Տրված կանխավճարներ ծառայությունների գծով	18,635	524
	<u>23,794</u>	<u>2,576</u>

11 Դեբիտորական պարտքեր հարկերի գծով

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Մնացորդ միասնական հաշվում	-	-
Դեբիտորական պարտքեր ԱԱՀ գծով	6	6
	<u>6</u>	<u>6</u>

12 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Դրամական միջոցներ դրամարկղում	921	450
Դրամական միջոցներ բանկային հաշիվներում	26,179	18,939
Դրամական միջոցներ ճանապարհին	898	413
	<u>27,998</u>	<u>19,802</u>

13 Փոխառություններ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Գաֆեսնեան Թանգարան» Հիմնադրամի ստացած ոչ ընթացիկ փոխառությունները կապակցված կողմերից արտացոլում է ԱՄՆ-ում գրանցված «Գաֆեսնեան Թանգարան» Հիմնադրամ Ինք.-ի և «Գաֆեսնեան Ընտանիքի» Հիմնադրամ Ինք.-ի կողմից տրամադրված համապատասխանաբար 5,538,164.56 և 13,655,358.77 ԱՄՆ դոլարի անտոկոս փոխառությունները (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ համապատասխանաբար 5,538,164.56 և 13,655,358.77 ԱՄՆ դոլար):

14 Առևտրային կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Կրեդիտորական պարտքեր պաշարների գծով	155	134
Կրեդիտորական պարտքեր ծառայությունների գծով	14,689	14,664
	14,844	14,798

15 Կրեդիտորական պարտքեր հարկերի գծով

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Կրեդիտորական պարտքեր եկամտային հարկի գծով	6,371	5,554
Կրեդիտորական պարտքեր ԱԱՀ-ի գծով	-	-
Կրեդիտորական պարտքեր դրոշմանիշային վճարների գծով	590	496
Կրեդիտորական պարտքեր անշարժ գույքի հարկի գծով	3	-
Կրեդիտորական պարտքեր բնապահպանական հարկի գծով	2	3
	6,966	6,053

16 Ընթացիկ պահուստներ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ	33,167	27,132
	33,167	27,132

17 Այլ ընթացիկ պարտավորություններ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Պարտքեր գործառնական վարձակալության գծով	1,144	1,144
Պարտքեր կոմիտեաներին կոմիսիոն պայմանագրերի գծով	1,069	1,535
	2,213	2,679

18 Ծախույթում կամ վնասում նախաձևված ծախսերի բաժանումը (վերլուծումը) ըստ բնույթի

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Հասույթ	47,290	53,596
Եկամուտներին վերաբերող շնորհներից եկամուտ	4,028	467
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	124,744	125,345
Այլ եկամուտներ	630,655	620,042
	806,717	799,450
Օտարված ապրանքների ինքնարժեք	(12,689)	(18,192)
Օգտագործված հումք և նյութեր	(23,301)	(17,770)
Աշխատակիցների հատուցումների գծով ծախսեր	(387,111)	(340,814)
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր	(167,391)	(164,497)
Այլ ծախսեր	(242,709)	(232,100)
	(833,201)	(773,373)

Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս)	(26,484)	26,077
Այլ ոչ գործառնական շահույթ/(վնաս)	231,431	1,800,427
Շահույթ/(վնաս) մինչև հարկերը	204,947	1,826,504
Շահութահարկի գծով ծախս	-	-
Շահույթ/(վնաս)	204,947	1,826,504
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	204,947	1,826,504

19 Հասույթ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Ապրանքների վաճառքից հասույթ	40,280	45,413
Արվեստանմուշների ցուցադրությունից հասույթ	-	-
Անդամակցությունից հասույթ	605	1,593
Շրջաչքի տոմսերի վաճառքից հասույթ	200	290
Վարձակալության տրամադրումից հասույթ	800	5,300
Համերգների կազմակերպումից հասույթ	5,175	964
Այլ ծառայությունների մատուցումից հասույթ	230	36
	47,290	53,596

20 Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Վաճառված ապրանքների ինքնարժեք	12,689	18,192
Համերգների կազմակերպման ինքնարժեք	3,164	659
Կոմունալ ծախսեր	350	451
Աշխատակիցների հատուցումների գծով ծախսեր	3,277	3,309
Պահպանման ծախսեր	508	530
Հիմնական միջոցների նորոգման և սպասարկման ծախսեր	7	49
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր	53	44
Այլ ծախսեր	588	508
	20,636	23,742

21 Գործառնական այլ եկամուտներ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Հիմնադրի կողմից տրամադրված նվիրատվություններ	622,017	618,801
Այլ նվիրատվություններ	2,245	215
Այլ եկամուտներ	6,393	1,0262
	630,655	620,042

22 Իրացման ծախսեր

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Մարկետինգի և գովազդի ծախսեր	417	1,279
Կոմունալ ծախսեր	1,545	1,903
Աշխատակիցների հատուցումների գծով ծախսեր	34,030	33,630
Պահպանման ծախսեր	3,071	3,587
Հիմնական միջոցների նորոգման և սպասարկման ծախսեր	878	727
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր	7,685	8,735
Բանկային միջնորդավճար	1,490	1,188
Այլ ծախսեր	802	555
	49,918	51,604

23 Կարչակալական ծախսեր

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Աուդիտի, խորհրդատվության և հաշվառման ծախսեր	11,937	11,240
Կոմունալ ծախսեր	462	516
Աշխատակիցների հատուցումների գծով ծախսեր	157,751	153,227
Ապահովագրության ծախսեր	14,158	11,657
Հիմնական միջոցների նորոգման և սպասարկման ծախսեր	1,072	1,116
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր	1,338	1,524
Չվիտի հատուցվող հարկերի գծով ծախսեր	48,385	41,272
Բանկային ծառայության ծախսեր	3,274	5,026
Գրասենյակային ծախսեր	160	182
Այլ ծախսեր	4,056	3,256
	242,593	229,016

24 Գործառնական այլ ծախսեր

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Կոմունալ ծախսեր	49,890	56,223
Աշխատակիցների հատուցումների գծով ծախսեր	192,053	150,648
Պահպանման ծախսեր	81,822	80,454
Հիմնական միջոցների նորոգման և սպասարկման ծախսեր	14,586	10,981
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր	158,315	154,194
Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր	14,205	8,979
Պաշարների, հիմնական միջոցների լուծարման գծով ծախսեր	207	321
Տույժ, տուգանքներից ծախսեր	50	-
Այլ ծախսեր	8,926	7,211
	520,054	469,011

25 Այլ ոչ գործառնական շահույթ/(վնաս)

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Ներդրումային գույքի վերաչափումից օգուտներ	437,734	169,976
Ներդրումային գույքի վերաչափումից կորուստներ	-	-
	437,734	169,976
Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտ	-	-
Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախս	-	-
	-	-
Փոխարժեքային տարբերություններից եկամուտ	212,387	1,808,986
Փոխարժեքային տարբերություններից ծախս	(418,690)	(178,535)
	(206,303)	1,630,451
	231,431	1,800,427

26 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվները

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	27,998	19,802
	27,998	19,802

Ֆինանսական պարտավորությունները

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Մտացված փոխառություններ կապակցված կողմերից	7,769,346	7,550,924
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	17,057	17,477
	7,786,403	7,568,401

27 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղությունները

Խումբը ենթարկվում է պարտքային, իրացվելիության և շուկայական ռիսկերի իր բնականոն գործունեության ընթացքում:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական կորստի ռիսկն է, երբ ֆինանսական գործարքի մյուս կողմը հրաժարվում է կատարել պայմանագրային պարտավորությունները: Խումբը ցուցաբերում է յուրահատուկ մոտեցում յուրաքանչյուր գործարքի կողմին: Մասնավորապես հաշվի են առնվում վիճակագրական, արդյունաբերական տվյալները, որոնք նվազեցնում են այդ ռիսկը:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը Խմբի ֆինանսական պարտավորությունների կատարման անկարողությունն է, երբ այն անհրաժեշտ է մարել: Խումբը կառավարում է իրացվելիությունը՝ համոզված լինելով, որ միշտ ունի համապատասխան իրացվելի ակտիվներ, որպեսզի մարի առաջացող հնարավոր պարտավորությունները ծայրահեղ և սովորական իրավիճակներում առանց անթույլատրելի կորուստների կամ ռիսկային վնասների:

Ծուխարկային ռիսկ

Ծուխարկային ռիսկն իր մեջ ներառում է փոխարժեքային տարբերությունը, տոկոսները և կապիտալի գնային փոփոխությունները: Խումբը չի հեջավորում շուկայական ռիսկը:

Խումբը գործարքներ է իրականացնում արտարժույթով և հետևարար ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթային ռիսկը Խմբի ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների վրա ունի հետևյալ ազդեցությունը՝

Հազար դրամ	Հայկական դրամ	Ազատ փոխարկելի արտարժույթ
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
Ֆինանսական ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	27,998	-
	<u>27,998</u>	<u>-</u>
Ֆինանսական պարտավորություններ		
Ստացված փոխառություններ կապակցված կողմերից	-	7,769,346
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	17,057	-
	<u>17,057</u>	<u>7,769,346</u>
Զուտ արդյունք	<u>10,941</u>	<u>(7,769,346)</u>

Հազար դրամ	Հայկական դրամ	Ազատ փոխարկելի արտարժույթ
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
Ֆինանսական ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	19,802	-
	<u>19,802</u>	<u>-</u>
Ֆինանսական պարտավորություններ		
Ստացված փոխառություններ կապակցված կողմերից	-	7,550,924
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	17,477	-
	<u>17,477</u>	<u>7,550,924</u>
Զուտ արդյունք	<u>2,325</u>	<u>(7,550,924)</u>

Խումբը հիմնականում ենթարկվում է ԱՄՆ դոլարի փոխարժեքի ազդեցությանը:

Խումբը չի ենթարկվում տոկոսների փոփոխության ռիսկի, քանի որ չունի տոկոսով տրամադրված կամ ստացած միջոցներ:

28 Կապակցված կողմեր

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապակցված կողմեր են հանդիսանում հետևյալ կազմակերպությունները.

- ⚡ ԳաֆեՆԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԻՄՆԱԴՐԱՄ ԻՆՔ.
- ⚡ ԳաֆեՆԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ ԻՄՆԱԴՐԱՄ ԻՆՔ.
- ⚡ ՍԻ ՍԻ ԷՅ ՓՐՈՎԻՔՅԻ ՓԲԸ
- ⚡ Մարաթոն Փրովիքթիս ՓԲԸ
- ⚡ ԷՅ ԱՎԻ ՓԲԸ

ԳաֆեՆԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՆՔ.-ի, ԳաֆեՆԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ ԻՄՆԱԴՐԱՄ ԻՆՔ.-ի և Խմբի միջև գործարքները ենթկայացված են «13. Փոխառություններ» ծանոթագրությունում:

2023թ. ընթացքում Գաֆէսնեան Ընտանիքի հիմնադրամի կողմից Գաֆէսնեան թանգարան հիմնադրամին է փոխանցվել 5,223,152.00 ՀՀ դրամ դրամաշնորհ՝ Արցախից տեղահանված ընտանիքների սննդի, կենցաղային և այլ կարիքները հոգալու, ինչպես նաև նրանց՝ Մարաթոն Փրոֆիթթիս ՓԲԸ բնակարաններում կացության ընթացքում կոմունալ և այլ ծախսերի փոխհատուցման նպատակով:

2023թ. ընթացքում Գաֆէսնեան Ընտանիքի հիմնադրամի կողմից Գաֆէսնեան թանգարան հիմնադրամին է փոխանցվել 20,168,929.20 ՀՀ դրամ դրամաշնորհ՝ Վենետիկի արվեստի Բիենալեյում ՀՀ ազգային տաղավարը ներկայացնելու աշխատանքների կազմակերպման համար:

Մի Սի Էջ Փրոֆիթթիս ՓԲԸ-ն Հիմնադրամին տրամադրել է վարձակալությամբ տարածք, որի վճարը 2023թ. ընթացքում կազմել է 4,560 հազար դրամ (2022թ.-ի ընթացքում՝ 4,560 հազար դրամ):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Մի Սի Էջ Փրոֆիթթիս ՓԲԸ-ի նկատմամբ Հիմնադրամի պարտավորությունը կազմել է 380 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 318 հազար դրամ):

Հիմնադրամի և Մի Սի Էջ Փրոֆիթթիս ՓԲԸ-ի միջև վերոնշյալ գործարքներն արտացոլված չեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում, քանի որ այն հանդիսանում է Հիմնադրամի դուստր ընկերություն, և համախմբման ժամանակ կատարվել են ներխմբային գործարքների բացառում:

2023թ. ընթացքում Գաֆէսնեան Թանգարան հիմնադրամը Մարաթոն Փրոֆիթթիս ՓԲԸ-ին է փոխանցել 250,724.40 ՀՀ դրամի նվիրատվություն Արցախից տեղահանված ընտանիքների կացության ընթացքում կոմունալ և այլ ծախսերի փոխհատուցման նպատակով:

29 Գործարքների դեկավարության և նրանց սևմիջակաև ազգակաևների հետ

2023թ. ընթացքում Խմբի հիմնական դեկավար անձնակազմը և նրանց ազգակաևները ստացել են 147,270 հազար դրամի վարձատրություն, որը ներառվում է «Աշխատավարձ և աշխատակիցներին հատուցումներ» հոդվածում (2022թ. ընթացքում՝ 137,806 հազար դրամ):

30 Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

Իրական արժեքը որոշվում է՝ զեղչելով համապատասխան դրամական միջոցների հոսքերը՝ օգտագործելով նմանատիպ գործիքների գծով շուկայական տոկոսադրույք: Արդյունքում, դեկավարության համոզմամբ, ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը համապատասխանում է դրանց հաշվեկշռային արժեքին:

31 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակվում են քաղաքական և տնտեսական բարեփոխումները: Որպես զարգացող երկիր Հայաստանը չունի այնպիսի օրենսդրական ենթակառուցվածք, որն առկա է ավելի զարգացած ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Հետևաբար Հայաստանում իրականացվող գործառնությունները կրում են որոշակի ռիսկեր, որոնք բնորոշ չեն զարգացած երկրներում իրականացված գործառնություններին:

Խումբը տեսանելի ապագայում կարող է ենթարկվել նմանատիպ ռիսկերի և դրանց հետևանքների ազդեցությանը: Այս ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում այն ճշգրտումները, որոնք կարող էին առաջանալ ապագա անորոշությունների պարզաբանումից: Այս ճշգրտումները, առկայության դեպքում, կբացահայտվեն Խմբի ֆինանսական հաշվետվություններում այն ժամանակաշրջանում, երբ դրանք կդառնան հայտնի կամ գնահատելի:

2023թ. սեպտեմբերին Ադրբեջանի ռազմական ուժերը սկսեցին նոր ռազմական գործողություն, որի հետևանքով Արցախի բնակչությունը ստիպված էր քել իր բնակավայրը և տեղափոխվել Հայաստան: Անկախ կողմերի միջև կնքված համաձայնագրից, առ այսօր Հայաստանի և Ադրբեջանի միջև կան բազմաթիվ չլուծված խնդիրներ՝ կապված սահմանագծման և սահմանազատման հետ, ինչն իր հերթին մեծացրել է անորոշությունը գործարար միջավայրում:

Վերոնշյալ հանգամանքների ունեցած բացասական ազդեցության հետևանքները անուղղակիորեն կարող են որոշակի ազդեցություն ունենալ Խմբի գործունեության վրա: Այդ հանգամանքների ամբողջական ազդեցությունը Խմբի գործունեության վրա գնահատելի ենարավոր չէ այնուամենայնիվ, դեկավարությունը գտնում է, որ այս հանգամանքներն էական ազդեցություն չեն ունենա Խմբի ֆինանսական վիճակի, ինչպես նաև ընթացիկ գործունեության և ծրագրերի իրականացման վրա:

32 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է, հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ պահանջում է մեկնաբանություններ: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Անկավարությունը համոզված է, որ կատարել է համապատասխան հատկացումներ հարկային պարտավորությունների գծով հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իշխանությունների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրա ազդեցությունը կարող է զգալի լինել:

Հիմնադրամն ունի հաջորդ հինգ տարիներ փոխանցվող հարկային վնաս: Առաջիկա ժամանակաշրջաններ փոխանցվող չօգտագործված հարկային վնասների գծով հետաձգված հարկային ակտիվ չի ճանաչվում, քանի որ հավանական է, որ Հիմնադրամն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել այդ չօգտագործված հարկային վնասները:

Համաձայն «Գաֆէսճեան Թանգարան» հիմնադրամին հարկային, մաքսային և պարտադիր վճարների գծով արտոնություններ տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ Հիմնադրամի կողմից թանգարանային և շարժասանդուղքների կասկադի համալիրի (այսուհետ՝ համալիր) գործունեություն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետություն սարքավորումների, այդ թվում՝ շարժասանդուղքների, ինչպես նաև թանգարանային գործունեությանն օժանդակող մասնագիտական սարքավորումների ներմուծումն ազատվում է մաքսային վճարներից (բացառությամբ մաքսավճարի), իսկ համալիրի գործունեության իրականացման համար «Գաֆէսճեան Թանգարան» հիմնադրամին իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումն ազատվում են ավելացված արժեքի հարկից:

33 Դատական վարույթներ

2023թ. ընթացքում «Գաֆէսճեան Թանգարան» հիմնադրամը դատական հայցեր չի հարուցել, և վերջինիս նկատմամբ հայցեր նույնպես չեն հարուցվել:

2017թ. ընթացքում «Գաֆէսճեան Թանգարան» հիմնադրամի դեմ ընդունվել է վարույթ, և ընթացքի մեջ է ԵԿԴ 2552/02/17 քաղաքացիական գործն ըստ Ադիս Աբրահամյանի հայցի՝ աշխատանքից ազատման հրամանն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանք կիրառելու պահանջի մասին: Նշված գործը զտնվում է վճարելիության վարույթում և բողոքի ներկայացման ժամկետները դեռևս սպառված չեն:

34 Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցող դեպքեր

Ճշգրտվող դեպքեր հաշվետու ամսաթվից հետո (31.12.2023թ) մինչև ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթիվը տեղի չեն ունեցել:

Գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ



Վահագն Մարարյան

Վիկտորյա Հովհաննիսյան